ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի՛ ոստիկանության ծառայողներ,

Սրտանց շնորհավորում եմ ձեզ Ոստիկանության օրվա կապակցությամբ:

Դուք կատարում եք պատասխանատու և պատվաբեր առաքելություն՝ ապահովելով օրենքի գերակայությունը, հասարակական կարգն ու քաղաքացիների անվտանգությունը: Ձեր ամենօրյա ծառայությունը պահանջում է բարձր մասնագիտական պատրաստվածություն, խիզախություն և անսահման նվիրվածություն:

Համայնքի անունից խորին երախտագիտություն եմ հայտնում ձեզ՝ բարեխիղճ և անձնվեր աշխատանքի համար: Ձեր ջանքերի շնորհիվ մեր համայնքում պահպանվում է կայունությունն ու խաղաղությունը, ինչը կարևոր նախապայման է համայնքի զարգացման և բնակիչների բարեկեցության համար:

Թող ձեր աշխատանքը միշտ արժանանա հասարակության վստահության և գնահատանքի: